Հավելված N 2
արդարադատության նախարարի
2020 թվականի դեկտեմբերի 10-ի
N 513-Լ հրամանի

# ԾՐԱԳԻՐ
# ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2021-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| N | Միջոցառում | Պատասխանատու մարմինը և համակատարողները | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ուղղություն 1. Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների, ինքնավնասումների կանխարգելմանն ուղղված օրենսդրության վերանայում և հետևողական կատարելագործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2021-2022թթ. (շարունակական) | Ամրապնդվել են քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների, ինքնավնասումների կանխարգելման օրենսդրական երաշխիքները, ապահովվել է միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցումը | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 2. | Ուղղություն 1. ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13- | ՀՀ արդարադատության նախարարություն | 2021 թվականի երկրորդ | Բարձրացվել է կալանավորված անձանց և | Օրենքով չարգելվա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 279-Ն հրամանի վերանայում | ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | կիսամյակ | դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացման արդյունավետությունը: | ծ միջոցներ |
| 3. | Ուղղություն 1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության կարգի վերանայում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) | 2021 թվականի առաջին կիսամյակ | Կատարելագործվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության կարգը, նախատեսվել են առավել արդյունավետ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | | կարգավորումներ ազատությունից զրկված անձանց տեղաբաշխման գործընթացի կապակցությամբ՝ ապահովելով ռիսկայնության որոշակի գործոնների ի սկզբանե չեզոքացումը և (կամ) դրանց նվազեցումը: | |
| 4. | Ուղղություն 2. Քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելման և ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2021 թվականի առաջին կիսամյակ | Իրականացվում է հոգեկան առողջության վիճակի, ինքնավնասման և ինքնասպանության ռիսկերի արդյունավետ գնահատում և կանխարգելում | Օրենքով չարգելված միջոցներ |
| 5. | Ուղղություն 5. Բժշկական և ոչ բժշկական անձնակազմի կողմից հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի հայտնաբերման, գնահատման, ինչպես նաև ինքնավնասման և ինքնասպանության հակում ունեցող անձանց բուժման ուղեցույցների | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն (համաձայնությամբ) | 2021 թվականի երկրորդ կիսամյակ | Ինքնավնասման և ինքնասպանության դեպքերը հայտնաբերվում, գնահատվում և կանխարգելվում են միասնական ուղեցույցների, չափանիշների հիման վրա | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մշակում | | | | |
| 6. | Ուղղություն 5. Քրեակատարողական ծառայողների և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև գործելակերպի օրինակելի ընթացակարգերի մշակում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2021 թվականի երկրորդ կիսամյակ | Ապահովված է բժշկական և ոչ բժշկական անձնակազմի միջև տեղեկատվության արդյունավետ փոխանակումը և համագործակցությունը, ռիսկային գնահատված պացիենտի նկատմամբ տարբերակված վերաբերմունքի և անհրաժեշտ կանխարգելիչ քայլերի ձեռնարկումը | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 7. | Ուղղություն 2. Վիճակագրության գործիքի մշակում և ներդնում՝ քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքերի (այդ թվում՝ դրանց փորձերի) վերաբերյալ[1] | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ | 2022 թվականի առաջին կիսամյակ | Հավաքագրվում է անհրաժեշտ վիճակագրություն ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքերի վերաբերյալ, իրականացվում է նման դեպքերի հիմքում ընկած | Օրենքով չարգելված միջոցներ |

[1] «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումներում հոգեկան առողջության, ինքնավնասումների և ինքնասպանությունների դեպքերի վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարվում: Տարեկան և կիսամյակային հաշվետվություններում նախատեսված է միայն առանձին կետ՝ ինքնասպանությունների թվային տվյալները լրացնելու համար, իսկ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց կողմից կատարված ինքնավնասումների վերաբերյալ առանձին վիճակագրության հավաքագրման գործիք կամ վիճակագրական տվյալներ հրապարակելու պահանջ առկա չէ, իսկ արձանագրված ինքնավնասման դեպքերի վերաբերյալ վիճակագրությունն ամփոփվում է քրեակատարողական ծառայության կիսամյակային և տարեկան հաշվետվություններում:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | (համաձայնությամբ) | | հանգամանքների պատշաճ արձանագրում, համակողմանի վերլուծություն, նախանշվում են դրանց կանխարգելման հիմնական ուղղությունները | |
| 8. | Ուղղություն 4. Բժշկական, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, անվտանգության և պահպանության ստորաբաժանումների անձնակազմերի պաշտոնների անձնագրերի և/կամ ֆունկցիոնալ պարտականությունների վերանայում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2021 թվականի երկրորդ կիսամյակ | Հստակեցվել են հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանությունների, ինքնավնասումների կանխարգելման ուղղությամբ բժշկական և ոչ բժշկական անձնակազմի պարտականությունները, ուրվագծվել է դրանց հստակ շրջանակը | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 9. | Ուղղություն 3. Հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման թեմաներով ծրագրերի մշակում և վերապատրաստումների իրականացում քրեակատարողական և բժշկական անձնակազմի համար | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2021-2022թթ. (շարունակական) | Բարձրացվել է անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքերի կանխարգելման հարցերում | Օրենքով չարգելված միջոցներ |
| 10. | Ուղղություն 3. Ինքնավնասման և | ՀՀ արդարադատության | 2021-2022թթ. | Բարձրացվել է | ՀՀ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ինքնասպանության դեպքերի պատշաճ քննության (հետաքննություն, ծառայողական քննություն) ապահովման նպատակով քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների իրականացում | նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | (շարունակական) | ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի պատշաճ քննության արդյունավետությունը | պետական բյուջե<br><br>Օրենքով չարգելված միջոցներ |
| 11. | Ուղղություն 3. Անչափահասների հետ աշխատանքներ իրականացնող անձնակազմի մասնագիտացման ապահովում հոգեկան առողջության հարցերում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2021-2022թթ. (շարունակական) | Ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալներ անչափահասներին պատշաճ հոգեբանական ծառայություններ տրամադրելու համար | Օրենքով չարգելված միջոցներ |
| 12 | Ուղղություն 4. Քրեակատարողական հիմնարկներում հոգեբույժների և հոգեբանների օպտիմալ թվաքանակի և պրոֆեսիոնալ կադրերի համալրման ապահովում՝ այդ թվում աշխատանքն առավել գրավիչ դարձնելու կամ խրախուսման այլ մեխանիզմներ ներդնելու հնարավորության դիտարկում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2022 թվականի երկրորդ կիսամյակ | Ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալներ ազատությունից զրկված անձանց պատշաճ հոգեբանական և հոգեբուժական ծառայություն տրամադրելու համար | ՀՀ պետական բյուջե<br><br>Օրենքով չարգելված միջոցներ |
| 13. | Ուղղություն 4. Քրեակատարողական հիմնարկներից դուրս հոգեբանական | ՀՀ արդարադատության նախարարություն | 2021-2022թթ. (շարունակական) | Ազատությունից զրկված անձանց մատուցվում են | ՀՀ պետական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ծառայությունների ներգրավում | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | | պատշաճ որակի հոգեբանական ծառայություններ, նման ծառայությունների մատուցման գործընթացում ներգրաված են նաև քրեակատարողական հիմնարկներից դուրս համապատասխան գործունեություն ծավալող սուբյեկտները | բյուջե<br><br>Օրենքով չարգելված միջոցներ |